

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Գրիգոր Գրիստափորեան, Ստեփան Գրիստափորեան, Աւետիս Գրիստափորեան եւ
Սուսաննայ Յակոբեան Սուսաննանցները խորին վշտով յայտնելով, առաջինը իր թան-
գազին կնոջ, իսկ վերջինները իրանց սիրելի հարսի

ԿԱՆՈՊՍԵ ՄԻՆԵՎՆԱ ՍՈՒՆԻԱՆԵԱՆՅԻ

մահը, խնդրում են բարեկամներին եւ ծանօթներին յարգել հանգուցեալի յիշատակը,
նորէ բերելով յուզարկաւորութեան կիրակի, փետր. 6-ին, առ. ժ. 10-ին, Կաթողիկեան
փ., տ. Զուլաթովի, այնտեղից Գամուկեանց եկեղեցին: Թաղումը լինելու է ինօլիմանքի գե-
րեմանատանը: Շարաֆ երեկոյեան, ժամի 6-ին կը կատարվի հոգեհանգիստ:

Կիրակի, փետրվարի 6-ին, գեներալ-մայոր

ԻՍԱՀԱԿ ՅՈՎՍԵՓԵԱՆ ՄԷԼԻՔ-ՂԱՅԿԱԶԵԱՆՅԻ

մահվան տարեգարծին, Զրկինանց ա. Կարապետ եկեղեցում (Գրիգորեօղևակայ փողոցի
միջև), ժամի 10-ին, կը մատուցանվի պատարագ եւ ապա հոգեհանգիստ, որի մասին
յայտնում է հանգուցեալի այրի վարդապետ Յովսեփեան Մէլիք-Ղայկազեանց իր որդիներ-
րով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նպատակադարձը կազմակերպութիւն. —
Ներքին Տեսչութիւն. Մամուլ. Ինչի նշան
էր. Երկրաշարժից վնասվածների օգտին. Նամակ
Աստուրականից. Նամակ Խմբագրութեան. Ներ-
քին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ
Շվեյցարիայից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱՅԻՐ-
ՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻ-
ՐԱԿԱՆ. Արձանի մօտ.

ՆՊՏԱԿԱՅԱՐՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

«Մշակի» մէջ մեք տպեցինք մի շարք
յօդաւածներ մեր երկրի նշանաւոր արդիւ-
նաբերական ճիւղերից մէկի, այն է շերա-
մապահութեան վիճակի բարւոյն մասին:
Արդիւնաբերութեան այդ ճիւղով
հետաքրքրված են Նուբու, Զաքարյայի,
Նուշու, Ագուլիսի, Աղաշի, Քոթայիսի
շրջակաները եւ ուրիշ շատ տեղեր: Ինչ-
պէս յայտնի է, աճող շերամապահութեան
ամենազարգացած պայմաններից մէկն է ա-
ռողջ սերմ ունենալ եւ բոլորովին չը
գործածել հիւանդութիւններ, որովհետեւ
բաւական է հիւանդութիւն սերմի մի փոքր
քանակութիւն, որ առողջ սերմից դուրս
եկած որդը վարակվի եւ փչանայ եւ այդ-
պիսով ոչնչացնէ արդիւնաբերութեան վրա
արած բոլոր ծախքը եւ աշխատանքը:
Մեր երկրի շերամապահները ներկայումս

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐԶԱՆԻՄՈՏ

Յուլիսի կէսն էր. Պարիզը միջօրէի տօթից
թուլացած հակալի պէս հեռում էր: Օրվայ այն
ժամն էր, երբ արիւստիկան ու բուրժուան
կուշտ ճաշից յետոյ փակվում են իրանց կիսա-
խաւար բնակարաններում եւ փափուկ դահա-
ւորակների մէջ մեղկ հանգիստ ու զով փրնո-
ւում, մինչդեռ ամբողջ, նկուղների, գետնա-
փորների, գործարանների, լուսարարանների հա-
սարակութիւնը, բազմաթիւ անապատան թա-
փառաշրջիկները, անգործ բանուոր-աշխիկները,
աղախները իրանց խնամքին յանձնված երե-
խաների հետ դուրս են թափվում հասարակաց
պարտէզները օդ չնչու, հանգստանալու հա-
մար:

Square Monge-ն էլ կենդանացել էր. մի փոք-
րիկ վանդակապատ պարտէզ էր Rue Mon-
ge-ի ծայրում, Լատինական թաղում, իսկ եւ
իսկ ամբողջ, ստորին դասակարգի մի պար-
տէզ: Պատահական արդեօք, թէ դիտաւորեալ
զուգադիպութեամբ այստեղ, ամբողջ, ժողովր-
դի այս պարտէզի մէջ է գրված վճիթների ար-

իր ստացած բոլոր կարծիքների մասին եւ
վերջնական քննութեան ենթարկէ հսկո-
ղութիւն սահմանելու ծրագիրը: Անկասկած
մեր շերամապահները հօգովն ներկայ դէպ-
քից եւ իրանց մասնակցութեամբ կը նը-
պաստեն իրանց համար մեծ կարեւորու-
թիւն ունեցող այդ խնդրի նպատակադար-
ձար լուծման:

Մենք կարծում ենք, որ հսկողութեան
աջողութեան ամենապիտան պայմաննե-
րից մէկը այն պէտք է լինի, որ սերմ
քննող հիմնարկութիւնը բոլորովին տեղե-
կութիւն չունենայ թէ ու՞մ է պատկա-
նում այն սերմը, որ նա քննում է, որպէս
զի ոչ մի կասկածի տեղիք չը լինի թէ
հետազոտութիւնը կատարված է կողմնա-
պահութեամբ: Այդ հիմնարկութիւնը պէտք
է ոչ մի յարաբերութիւն չունենայ սեր-
մապահների հետ նրանց սերմի հետա-
զոտութեան վերաբերմամբ: Սերմապահու-
նները պէտք է ներկայացնեն իրանց սերմը
մի պաշտօնական յանձնաժողովի, որը կըն-
դունի սերմը, կը դնէ նրա վրա մի յայտնի
նօմեր եւ այդպէս կուղարկի շերամապահ-
կան կայարանը հետազոտելու:

Կա աջողութեան մի պայմանն է. միւսը
այն պէտք է լինի, որ տեղական սերմարան-
ները լինեն յայտնի վերատեսչութեան տակ,
որպէս զի կարելի լինի մաքաւել շերամի
է այն հիւանդութիւնների դէմ, որոնք
չեն կարող իմացվել խոշորացողի միջոցով,
եւ սակայն գոյութիւն ունեն շերամապահ-
ների անտեսութեան մէջ:

Շերամապահութիւնը մեր երկրին տա-
լիս է խոշոր արդիւնք, ուստի կարեւոր է
որ նրա շահերը պաշտպանված լինեն եւ
նրա կանոնաւոր զարգացման պայմանները
ապահովված:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Գործիչը—ինչ ասպարէզում էլ լինի նա—
պիտի ներկայացնէ այն զաղափարների մարմ-
նացումը, որոնց ծառայելու պաշտօնն է յանձն
առել Սա մի շատ հին կանոն է եւ Աւետա-
րանի այն խօսքերը թէ «առաջ կատարում էր
եւ ապա ուսուցանում» ցոյց են տալիս թէ
երկնային վարդապետն անպակն հեղինակու-
թեան ոյժը ինչի մէջ էր: Բայց այդ հասկացո-
ղութիւնը շատ անգամ վէճի առարկայ է դառ-
նում: Մեզ ասում են՝ ի՞նչ գործ ունեք թէ ինչ-
պիսի մարդ է այս կամ այն գործիչը, բաւա-
կան է, որ նա տալիս է բարոյականութեան,

ծաղկին, աղախինք թափով յետ էր քաշում իր
կուրծքը եւ երեխան իր արծաթահանդէս ձա-
նով ծիծաղում էր: Գոհ էին երկուսն էլ:

Մի հարեւած աղջիկ երեքսրով մօտեցաւ,
կանգ առաւ այն նստարանի առաջ, ուր նստած
էին աղախինն ու երեխան: Անմիտ, հարեւածին
յատուկ ժպիտը խաղում էր նրա կարմրած դէմ-
քի վրա. նա նայում էր երեխային, ապա ան-
ցաւ, պտուկեց մի նստարանի վրա եւ վայրկե-
նապէս քնեց: Ուտիկանը մօտեցաւ, նրան ցըն-
ցեց, վերկայացրեց:

—Հասարակաց պարտիզում քնել չէ կարելի,
ասաց նա:

—Ես տուն չունեմ, ինձ արձակեցին, ես գող
չեմ... քնում եմ...

Կինը նորից պտուկեց, աչքերը փակեց: Ու-
տիկանը այս անգամ բռնեց թեւից եւ փորձեց
քաշելով դուրս տանել պարտիզից, բայց աղ-
ջիկը իր ձեռքն աղաւթեց ու փախաւ, նա չէր
ուզում դուրս գնալ: Ուտիկանը յետեւից ընկաւ
եւ նրանք սկսեցին պտույտներ գործել մի-
ջուրջը: Փոքրիկ կալոօջները մի խումբ նրանց
յետեւից ընկաւ սուշելով, ճշարտով ծիծաղելով:
Պարտիզում ընդհանուր քրքիջ բարձրացաւ:
Եւ արձանը նայում էր այս բոլորին եւ ժղպ-
տում էր վերելից:

Ամբողջ պարտիզում չէր ծիծաղում միայն
մի մարդ, մի գունատ երիտասարդ: Սա էր

չիտակութեան, ագնութեան դասեր. ձեզ մի-
այն այդ է հարկաւոր, իսկ թէ զանազան ինչ-
պէս է վերաբերվում իր ասածներին իբրեւ
մի մարդ, իբրեւ հասարակութեան մի մաս-
նաւոր անդամ—այդ ձեռ գործը չէ: Հա-
կանալի է թէ որքան անհեթեթութիւն կայ
այդ տեսակ բացարձակեան մէջ: Գործը
եւ խօսքը չը պիտի զանազանվեն միմեանցից,
խօսքը միայն գործով է կենդանի: Ի՞նչ կը լի-
նէր հանձարեղ Տօլստօյը, եթէ իր մասնաւոր,
սոսկական կեանքը չէնթարկէր այն զաղափար-
ներին, որոնց քարոզում է այնքան մեծ տո-
կոնութեամբ, հաւատով: Ի՞նչ կարող էր լի-
նել մի էմիլ Զօլա, եթէ հասարակութեան դէմ
քին չարտելով նրա արտադրած ցեխն ու ա-
պականութիւնը, ինքն էլ մի եւ նայն ժա-
մանակ թաւալվէր այդ կեղտոտութիւնների
մէջ, իր համար պարտաւորական չը համարէր
այն, ինչ ուրիշներին է քարոզում: Բոլոր լա-
ւագոյն, հաշկված գործիչները այդպէս են
սովորեցրել եւ նրանց մեծութեան ու փառքի
ամենամեծ մասը հէնց այն բանի մէջ է, որ
նրանք իրանց անձով ցոյց տուին թէ ինչ են
ուզում, որ մարդիկ հասկանան: Այս քանի օ-
րերը ուսաց ամբողջ մամուլը յիշատակեց
յայտնի ուս հրապարակախօս եւ գործիչ Գեր-
ցենի մահվան երեսնամեակը: «Русское Богат-
ство» ամսագիրը իր մի յօդուածի մէջ փայլուն
կերպով բնորոշեց այդ տաղանդաւոր մարդուն:
Ամսագիրը ասում է.

Հայեացքների լայնութիւնը նրա մէջ միա-
նում է համոզմունքի հետ, կրթութիւնը
ինքնուրոյնութեան հետ, ագնութիւնը հիւս-
վում է ձրքի հետ, առեւտրիւնը դէպի բըռ-
նութիւնը միանում է դէպի սանձարձակու-
թիւնը ունեցած արձամարանքի հետ: Ի՞նչ-
պիսի մտածող է նա—նրա իդէաներն այսօր
էլ զգացվում են օդի մէջ, ի՞նչ տեսակ ձայն
է նա—նրա թողած գրական ժառան-
գութիւնը այնքան հարուստ է. ինչպիսի
ստիլիստ է նա—նրա պրոզան կարող է կրա-
սիքական դանաթ, եւ նրա ասացումներնե-
րից ոչ մէկը չէ հնացել: «Բաժանել գրողին
մարդուց միշտ հնչող է, իսկ ներկայ դէպ-
քում անկարելի է»: Եւ նա մի հիանալի մարդ
էր: Նա անասունի շատ բախտաւոր էր լի-
նում—եւ բախտը նրա մէջ բարի հեղեղներ
թողնում: Նա անչափ տանջվում էր—եւ
մաքրվում էր այդ տանջանքների մէջ: Նա
ընկնում էր եւ յարութիւն առնում: Նրա
մէջ չը կարէին ոչ փոքրիկ պակասութիւններ,
ոչ փոքրիկ արժանաւորութիւններ—ամեն
ինչ նրա մէջ լուրջ էր, լայն եւ ուժեղ: Վե-
րեւից ցոյց տուած ճանապարհը նա անցաւ
աշխոյթ կերպով, մի քիչ վշտալի կերպով, մի
քիչ էլ ծիծաղելի կերպով եւ թողեց իր ե-
տեւից փայլուն, լուսանաճանց հեղք:

Ամեն մարդուն, ի հարկէ, վերելից չէ

արդեօք մոռացել ամենքին, թէ ամենքն էին
մոռացել արան, դժուար էր իմանալ, բայց մի
խորթութիւն կար այս մտալ մարդու եւ քրջա-
ցող ամբողջի մէջ: Նա միայնակ էր մի նստա-
րանի վրա եւ կարծես չէր էլ ուզում, որ ի-
րան նկատեն: Չոր հացի մի անձեւ կտոր ու-
նէր, որ կրծում էր շտապ շտապ, նա պէտք է
որ շտա քաղցած լինէր: Ատամների ոյժը երեւի
նրան անբաւարար թւաց իր քաղցը յագեցնե-
լու համար, որովհետեւ հանեց գրպանից մի
դանակ, սկսեց նրանով կտրել չոր հացը եւ
ծամել: Ո՞ր էր նա—մի մարդ, Պարիզում մի
մարդ, ծովում մի կաթիլ:

Պարիզում յայտնվեց մի պարոն, նոյն իսկ
մի բաղաւոր պարոն, եթէ արտաբերով կա-
րելի է որոշել մի անձի բաղաւորութիւնը:
Յամենայն դէպս նա լու ճաշած եւ մի քանի
բաժակ էլ պարպած պարտի լինէր: Նա դեռ չար-
ժում էր բերանը այնպէս, ինչպէս ճաշից յետոյ
մարդ լեզուով փնտռում է ատամների արան-
քում մնացած կերակրի կտորները: Դէմքը փայ-
լուն էր, ինքնադուր: Անասնական մի երանու-
թիւն կայ, որ փայլում է շատաւոր մարդու
դէմքին, որ ետանդի փոխարէն արտաբերում
է մի ինչ որ անգործական, մի յոգնած, ոչ-
խաղալի բարութիւն, երբ մարդը կուզի, որ
ամբողջ աշխարհը իր պէս կուշտ լինի, միայն
իրան հանգիստ թողնեն, որ կերածը մարսէ:

նակ իրանց են յատկացնում եկեղեցական դար-
գերից օգտակար համար նշանակված վճարները»:
Պարտք են համարում մի քանի կարևոր
մանրամասնություններ առկայելը, որպես զի
մանրամասնություններ որոշ դարձվածքներում
դրվել զբաղման մասին: Ժողովում յակման
յանունն յնշվել է թե՛ Մոզուս և քանանական
են զեղծություններ արել են մեզանչել եկեղեցու
օգուտները իրանց սեպականացնելով: Իրեն
«զեղծություններ» կատարողներ յնշվել են 1) եկեղե-
ցու առաջ քանակայ և կոնստանտնուպոլսի ան-
գամ Գրիգոր Տէր-Բարսեղեան, 2) Յովհաննէս
քանակայ Տէր-Գրիգորեան, և 3) նորընծայ
վարդան քանակայ Տէր-Ղեւոնդեան:
Այս տխուր և անուշաբույր մասնակցած
կարևոր ինչորեք դարման անկող համար ա-
ռաջարկվեց ժողովականներին մի մասնաժողով
կազմել միջոցներ մշակելու յնշեալ զեղծու-
նների առաջն առնելու: Ժողովը միաձայն ըն-
դունեց այս առաջարկությունը և միաձայն
ընտրեց մի մասնաժողով:
Պ. Խաչատրյան, ի լրումն ընտրությունն առի-
թով կայացած ժողովի, ինչորեք երկուրդս հրա-
տարակէք ձեր լրագրումը:
Երևան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ 1899 թուականի ընթացքում Երե-
ւանեան նահանգում բաժնակի բերքը ընդա-
մենը 211,400 պուդ է եղել: Այդ քանակու-
թիւնն ստացված է 17,000 զեռետախի հողից:
Իրերը միատեսակ չէր նահանգի զանազան
մասերում, որովհետեւ ամառային երաշտի
պատճառով այն տեղերում, ուր ջուրը սակա-
ւ էր՝ աղո ձուռն չը ստացվեց:

Թիֆլիսի քաղաքային վարչությունը փետր-
վարի 3-ից մինչև 10-ը փերային հետեւեալ
տական է հրատարակել: Տաւարի մի քանի
փուռեր 11 կ., ոչխարի մի քանի փուռեր 11 կ.,
սուկի 15 կ., գոմէի մի քանի փ. 5 կ.:
Ողի բոլոր փ. 10 կ., միւս մասերի փ. 8 կ.:
Քաղաքային խորհրդարանի վճիռ համա-
ձայն գոմէի միւր կրպակներում պէտք է կախ-
ված լինի առանձին տեղում և այդ տեղի վրա
պէտք է կայքը լինի «գոմէի միւս» վերնագրեր:

Ստացանք հանգուցեալ նշանաւոր գէօլոգ
Արիստի մի խոյր աշխատութեան առանձին
թարգմանությունը, որ կուռ է «Геология Ар-
мянскаго Нагорья, западная часть» վերնա-
գիրը: Թարգմանությունը կատարել է Կոլէնկո
Գիրքը, որ կազմում է մեծ հատոր, տպված է
հաստ թղթի վրա, մաքուր, պարունակում է
նկարներ և քարտեզներ, բաղկացած է մեծա-
ղի 202 երեսից և արժէ 5 ռուբլի: Այդ աշ-
խատությունն անհրաժեշտ մի ուղեցույց է այն
անձանց համար, որոնք հետաքրքրվում են հայ-
կական լեռնաշխարհի գէօլոգիական ուսումնա-
սիրութեամբ: Կարելի է միայն ցուել, որ մի
այդպիսի լուրջ և գիտական երկարություն
աւելի վաղ չէր թարգմանվել գերմանական բը-
նագրից, որ լոյս է տեսել 1882 թ.ին:

Մեզ խնդրում են հաղորդել, թէ հինգշաբթի,
փետրվարի 10-ին, Թիֆլիսի Արտիստական ըն-
կերությունը հաշիւում բերելի Ա. Ի. Սատի-
սեան մի հրապարակական դասխառություն կը
կարդայ յօգուտ Արտիստական արշտանցի
վաների: Դասխառությունն ներկէ է. «Թուր-
ախար և ժողովրդական առողջապահական
կայարանները» (Туберкулезъ и народные са-
наторіи): Տոմարները (30 կ. 1 թ. 10 կ.)
նախօրոք կարելի է ստանալ Արտիստական ըն-
կերությունն չինություն մէջ և Տէր-Սարգսեա-
նի մարզպետում, Դիլորդայա փողոցի վրա:

Փետրվարի 3-ից Ախալքալաքից հեռագրում են
«Тифл. Листок» լրագրին. «Փետրվարի 2-ին,
երկուրդ 10 ժամին, այստեղ գագաթնայն ստորերկ-
րեայ բաւականաչափ զօրեղ հարուած, որ
կրկնվեց նաեւ հեռուեալ առաւօտ 3³/4 ժամին:
Օժանդակությունների բաժանումն կոմիտէի
հեղքով շարունակվում է: Եօթը գիւղում ձրի
ձաշարաններ են բացված երկրաշարժից վնաս-
վածների և բանւորների համար: Եկաւ բժիշկ
Սատիսեան, որին հրաւիրել է Թիֆլիսի կոմի-
տէր բժշկական օգնություն հասցնելու այն
վնասվածներին, որոնք ժամանակաւորապէս
գտնվում են գիւղերում: Միւս բժիշկը, Ա.
Խաչատրյան հիւանդանոցի վարակիչ հիւանդու-
թիւնների բաժինը կառավարող Անարոնեան
հիւանդանոցում:

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերու-
թիւնը պատուիրել է 20,000 պուդ պղնձի ար-
շապ խաղողի պղինձի բժշկություն համար:
Արշապը և ծծումբը, նաեւ գիւղատնտեսա-
նաց

կան զանազան գործիքները պէտք է վաճառվեն
Թիֆլիսի կենտրոնական պահեստում և Կա-
խէթի հինգ պահեստներում, որոնք բացված են
անցեալ տարվայ ընթացքում:

Թիֆլիսի պղնձագործական դպրոցի կառավա-
րիչ հաստատված է միջնորդութեան կողմից
Պ. Պրիտուկին կօ, որ վերջին տարին իրա-
պէս կատարում էր այդ պաշտօնը:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Յունվարի 30-ին,
սիրողներ խումբը, պ. Յ. Մալխասեանի նա-
խաձեռնութեամբ՝ յօգուտ Ախալքալաքի գաւա-
ռում երկրաշարժից վնասված գիւղացիների
խաղող Մօլիէրի «Ակամայ բժիշկ» կօմէիւն
և «Երկու քաղցածներ» վօղովիւր: Դերակա-
տարներին մէջ աղո չէին իրանց խաղող միայն
Յ. Մալխասեան և թ. Թուման: Թատրոնը
համարեա թէ լի էր: Զուտ արդիւնք ստաց-
ված է մօտ 130 ռուբլի»:

ԱՆԱԼՔԱԼԱՔ գիւղից (Գօրու գաւառ) մեզ
գրում են. «Տօների հետ սկսվեցին և մեր տի-
կինների ու օրիորդների ընտանեկան համեստ
«վէջերները» իրանց անբաժանելի լոտի հետ,
միայն ի պատիւ նրանց պիտի աւել, որ լոտի
մէջ տանողը մի որոշ մաս է վճարում յօգուտ
տեղական հայոց դպրոցի»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇՎԷՑՏԱՐԻԱՍԻՑ

Ժընեվ, յունվարի 28-ին
Դուք շատ լաւ գիտէք, որ հայոց իգական
սեռը վաղուց արդէն ունի իր ներկայացուցիչ-
ները Եւրօպայում, որոնք իբրեւ ուսանող-
ուհիներ ցրված են զանազան համալսարա-
նական քաղաքներում: Այդպէս օրինակ, Ժը-
նեվում կան մօտաւորապէս 15 հայուհիներ,
որոնք ցրված են համալսարանի զանազան ֆա-
կուլտետներում: մի այդքանն էլ Լօզանն և
Յիւրիկա ձայ ուսանողուհիներ կան և եղել
են նոյնպէս և Գերմանիա, Ֆրանսիա, և եթէ
չիմ սխալվում՝ նրանց կարելի է հանդիպել և
Աւստրիայում, եթէ չը հաշուեն Իտալիան, ուր
հայուհիները ուսումնասիրում են երաժշտու-
թիւնը և երգեցողութիւնը:

Դրանք բոլորն էլ, առանց բացառութեան,
ուսանողուհիներ են: Թիւրքահայ օրիորդ
այս րօպէին չը կայ եւրօպական և ոչ մի հա-
մալսարանում, և այդպիսով թէ Կ. Պօլսը և
թէ Թիւրքաց Հայաստանը, որտեղ իգական
կրթութեան գործը ծանօթ է եղել երկար տա-
րիներով ի վեր, չունեն և ոչ մի ներկայացու-
ցիչ մեր ուսանողուհիների շարքում: Վերջին
տարիների տխուր անցքերը մասամբ հասկա-
նալի են դարձնում այդպիսի մի երեւոյթ Հայ-
աստանի համար. բայց թէ ինչու, օրինակ, Կ.
Պօլսը, որ միշտ կարված է եղել հայաբնակ
գաւառներից, այդ տեսակ մի թշնամութիւն է
ցոյց տալիս դէպի կանանց բարձրագույն կըր-
թութեան գործը, բացառել շատ գծուած է:

Միթէ, յիշուի, թրքական հարեմների բար-
քերը այդքան խոր տպաւորութիւն են գործել
թիւրքահայերի վրա: Նկատեցէք մի այդպիսի
բան Կ. պօլսեցի հային, և նա կը բողբէ ձեր
նկատողութեան դէմ՝ իր պօլսական ամբողջ
պերճախօսութեամբ, հաւատարմութեամբ, որ կա-
նանց կրթութեան անհրաժեշտութիւնը իրանք
շ

